ԳՐԱԲԱՐԻ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԱԵՌԻ ՀԱՐԱԴՐԱՎՈՐ ԲԱՅԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԺՈՒՅԹԸ

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գրաբարի կրավորական սեռի համադրական բայերի մասին մի շարք արժեքավոր դիտարկումներ ունեն թե՛ նախորդ դարերի որոշ քերականներ և թե՛ մեր դարի անվանի լեզվաբաններից Նրանք, ովքեր զբաղվել են գրաբարի քերականական հարցերի քննությամբ: Ինչ վերաբերում է գրաբարի կրավորական սեռի հարադրավոր բայերին և վերջիններիս արժութային դրսևորումներին, ապա դրանք առանձին ուսումնասիրության նյութ չեն եղել:

Գրաբարի լեզվական նյութի քննությունից պարզվում է, որ կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտվում է կազմությամբ ոչ միայն համադրական, այլ նաև հարադրավոր բայերի միջոցով:

Գրաբարում կազմությամբ համադրական բայերը՝ իբրև բառային ինքնուրույն միավորներ, խոսքից դուրս կարող են արտահայտել միայն ներգործական կամ չեզոք սեռի քերականական իմաստ: Դա պատճառաբանվում է նրանով, որ, խոնարհման ի տարբերություն արդի հայերենի, որտեղ կրավորական վ ածանցի շնորհիվ կրավորական սեռի քերականական իմաստն արտահայտվում է թե՛ խոսքից դուրս (անդեմ բայերի միջոցով) և թե՛ հաղորդակցման շղթայում (դիմավոր բայաձևերի միջոցով), գրաբարի համադրական բայերը խոսքից դուրս կրավորական սեռի իմաստի արտահայտության քերականական միջոցներ չունեն[1]: Կրավորական սեռի քերականական իմաստը խոսքի մեջ արտահայտվում է ներգործական սեռի բայերի կրավորաձև խոնարհման ճանապարհով: Ասվածից դժվար չէ եզրակացնել, որ համադրական բայերի շարքում կրավորական սեռի քերականական իմաստի արտահայտությունը կախված է միայն միևնույն բայական իմաստը կրող ներգործական սեռի բայերի առկայությունից: Ընդ որում, պետք է նշել, որ գրաբարում համադրական բայերի խոնարհման համակարգում կրավորական սեռի քերականական իմաստի արտահայտության մի քանի պլաններ կան:

Մի դեպքում կրավորական սեռի քերականական իմաստը ձևավորվում է ներգործական սեռի քերականական իմաստն արտահայտող բառահարաբերական ձևույթներից տարբեր՝ այլ ձևույթների միջոցով՝, ինչպես՝ պատմեցի-պատմեցայ, յիշեցից-յիշեցայց, ա՛րկ-արկի՛ր և այլն, որոնք, համապատասխանաբար, նշանակում են «պատմեցի»-«պատմվեցի», «(կ)հիշեմ//պիտի հիշեմ»-«(կ)հիշվեմ//պիտի հիշվեմ», «նետի՛ր»-«նետվի՛ր»: Հմմտ. Եւ զգաստացեալ՝ մատեաւ եկաց պատմեաց զմեծամեծ տեսիլսն, զոր ինչ ետեսն (Բուզ., 190) և՝ Ապա պատմեցաւ թագաւորին Պապայ յաղագս

---

1 *Թեև կշտամբեալ լինիմ, ընկալեալ լինիմ և նման կապակցությունները կրավորական իմաստ են արտահայտում, բայց կրկնարադրյալ ժամանակաձևերի ելակետերն են, ինչպես՝ Կշտամբեալ եւ յանդիմանեալ եղեւ ի Ներսիսէ (Բ ո ւ զ., 52): Իբրեւ ոչ ընկալեալ եղեւ (ՆՀԲ) և այլն:*

2 *Կրավորաձև խոնարհման բառահարաբերական ձևույթները միշտ չէ, որ արտահայտում են կրավորական սեռի քերականական իմաստ: Օրինակ՝ Ա և Ու խոնարհման չեզոք սեռի ածանցավոր բայերը ևս ստանում են կրավորաձև խոնարհման բառահարաբերական ձևույթներ, սակայն չեն կարող արտահայտել կրավորական սեռի քերականական իմաստ:*

օրերացն, զոր եդ Հայր մարդպետն տիկնոջն Փառանձեմայ (Բուզ., 160) և այլն:

Մյուս դեպքում կրավորական սեռի քերականական իմաստն արտահայտվում է ե խոնարհիչ ձայնավորը (վերջինս և նրան հաջորդող յ ձայնակապը որոշ դիմաթվային ձևերում միասին տառադարձվում են որպես է) ի խոնարհիչ ձայնավորով հերթագայելով, ինչպես՝ պատմեն-պատմին, յիշեսցեն-յիշեսցին, մի՛ յիշեր-մի՛ յիշիր և այլն, որոնք, համապատասխանաբար, նշանակում են «պատմում եմ»-«պատմվում եմ», «(կ)հիշեն//պիտի հիշեն»-«(կ)հիշվեն//պիտի հիշվեն», «մի՛ հիշիր»-«մի՛ հիշվիր»: Հմմտ. Զայս վէպ պատմեն մերձաւոր սիրելեաց–զանցս եղելոյ աշխատութեան ուղղոյն ճանապարհաց (Ագաթ., 2) և՝ Ճառք ի միջի ձերում պատմին (Ագաթ., 123) և այլն:

Երրորդ դեպքում գրաբարում ներգործական և կրավորական իմաստները զանազանվում են յուրովի: Իսկն այն է, որ գրաբարյան մի շարք բայեր և բազմաթիվ բայերի էլ դիմավոր ու անդեմ ձևեր օժտված են միաժամանակ արտահայտելու թե՛ ներգործական և թե՛ կրավորական սեռի քերականական իմաստ: Ընդունված է դրանք անվանել հասարակ (ընդանուր) բայեր: Օրինակ՝ յիշեալ, գողացայ, ծնանիս անդեմ և դիմավոր բայաձևերը միաժամանակ ներունակ են արտահայտելու, համապատասխանաբար, «հիշել»//«հիշած»–«հիշվել»//«հիշված», «գողացայ»–«գողացվեցի», «ծնում//սերում ես»–«ծնվում//սերվում ես» ներգործական և կրավորական իմաստներ: Արդ, քանի որ հասարակ անվանվող բայերն ու բայաձևերը չունեն ներգործական և կրավորական սեռերի քերականական իմաստների արտահայտման առանձին միջոցներ, ուստի քերականական իմաստի կոնկրետացումը կատարվում է միմիայն խոսքային որոշակի իրադրության մեջ պարտադիր կերպով հիշատակված (կամ ենթադրվող) ուղիղ կամ ներգործող անուղղակի խնդիրներից որևէ մեկի միջոցով: Հմմտ. Յղացաւ ամուսին նորա և ծնաւ երկուս որդիս երկուորեակս (Բուզ., 10) և՝ Ի սոցանէ ծնաւ այր սքանչելի և զարմանալի Ներսէս (Բուզ., 38):

Ուղիղ կամ ներգործող անուղղակի խնդիրներից որևէ մեկի բացակայության դեպքում հասարակ բայաձևով արտահայտված գործողության սեռային իմաստը մնում է չտարբերակված, և միայն այդ նախադասությանը նախորդող խոսքահատվածի բովանդակության պլանից կարելի է որոշել տվյալ գործողությունը կատարող ենթակայի ակտիվ կամ պասիվ լինելը: Այսպես՝ Ասեն. «Մեք ընդ խաղ արարաք» (Առակ., ԻԶ, 19) նախադասության մեջ միայն նախորդ հատվածից է դիտակցվում, որ ենթական ներգործվում է որևէ առարկայի կողմից:

Պատկերը բոլորովին այլ է գրաբարի կազմությամբ հարադրավոր բայերի առումով: Վերջիններս՝ իբրև բառային ինքնուրույն միավորներ, արտահայտում են կա՛մ ներգործական, կա՛մ չեզոք,կա՛մ էլ կրավորական սեռի քերականական հարաբերություն: Այսպես՝ ի մտի դնել, յինքն արկանել հարադրավոր բայերը ներգործական սեռի քերականական իմաստ են արտահայտում, ամբաստան լինիմ, յայց ելանել բայերը՝ չեզոք սեռի, անարգ լինիմ («անարգվել»), գան ըմպել («ծեծվել») բայերը՝ կրավորական սեռի: Օրինակ՝ Զանմեղ մարդիկ յինքն արկանէր (Եղիշէ, 64): Մի՛ դիցէ ի մտի զգժտութիւն (Բուզ., 52): Ամբաստան լինէին քսութեամբ զզօրավարէն Մուշեղէ առ թագաւորին (Բուզ., 166): Որչափ դու ինձ ահա յայց ելեալ՝ Առաւել ողորմեսցիս ըստ քոյդ մեծութեան (ՆՀԲ): Անարգ եղիցին (հուն. անարգեսցին–Գ.խ.) նոքա որպէս ջուր (Սաղմ., ԾԷ, 8)[3]: Քանզի եթէ որդի ուրուք իցէ, գան ոչ ըմպիցէ (Եզնիկ, 82) և այլն:

Հարադրավոր բայերի քննությունը ցույց է տալիս, որ կրավորական սեռի քերականական իմաստի արտահայտության միջոցներն այստեղ ևս

---

3 *Աստվածաշնչյան այս և հետագա նախադասությունները քաղել ենք Վենետիկի 1860 թ. հրատարակությունից, որոնք բերում ենք ընդունված համառոտագրությամբ:*

միատարր չեն: Մի դեպքում ներգործական սեռի հարադրավոր բարդությունների ներգործական սեռի քերականական իմաստն արտահայտող բայական բաղադրիչների փոխարեն միևնույն հարադրի հետ կիրառվում են կրավորական սեռի քերականական իմաստ ձևավորող բայական բաղադրիչներ[4]: Լեզվական փաստերը վկայում են, որ եթե ներգործական սեռի հարադրավոր բայերի բայական բաղադրիչը հիմնականում մի ներգործական (հազվադեպ՝ չեզոք) սեռի բայ է[5] [հալածական առնել (Ա Մակ., Բ, 47)], ապա կրավորական սեռի հարադրավոր բայերի ձևավորման համար բայական բաղադրիչի գործառույթ են կատարում հիմնականում չեզոք սեռի բայերը՝ [հալածական լինիմ (Բ Մակ., Ե, 8)]: Հմմտ. Ծաղր առնէր զբանս (Բուզ., 94) և՝ Զի ծաղր եղէց յատենին Քրիստոսի (ՆՀԲ): Հրամայեաց զնա խեղդամահ առնել (Խոր., 272) և՝ Յիւրոց ծառայից խեղդամահ լիցի (ՆՀԲ): Ատելի առնել զիս (Ծննդ., ԼԴ, 30) և՝ Լիցի եւ ատելի յազգաց (Առակ., ԻԴ, 24): Աւար հարկանէր զհրապարակս (Յուղ., Ա, 14) և Աւար հարան զարդք և կազմուածք տանց (ՆՀԲ) և այլն:

Հատկանշական է, որ գրաբարում ներգործական սեռի քերականական իմաստն արտահայտելու համար միևնույն հարադրի հետ որպես հարադրյալ գլխավորապես կիրառվում է առնել, իսկ կրավորական սեռի քերականական իմաստն արտահայտելու համար լինիմ չեզոք սեռի բայը, որն, ինչպես նշել ենք, ակտիվ դեր է կատարում նաև չեզոք սեռի հարադրավոր բայերի բառակազմության ոլորտում: Լինիմ հարադրյալով ձևավորված ներգործական սեռի հարադրավոր բայերից են՝ ազդ լինիմ, ազդումն լինիմ, անարգ լինիմ, անընկալ լինիմ, ատելի լինիմ, արօրադիր լինիմ, բնաջինջ լինիմ, բրածեծ լինիմ, գանահար լինիմ, դատապարտ լինիմ, մատն լինիմ, նպաստ լինիմ, որդեկոտոր լինիմ, ի պահեստի լինիմ, սուսերահար լինիմ, վաճառիկ լինիմ և այլն: Օրինակ՝ Ազդ լինէր յերիցանց՝ հասնել յօգնականութիւն (Կորիւն, 82): Լիցի եւ ատելի յազգաց (Առակ., ԻԴ, 24): Ի մտերմացն Շապհոյ դեղակուր եղեալ մեռանի (Խոր., 235): Շատ է այնպիսւոյն պատուհասն ըստգիւտ լինել ի բազմաց անտի (Ոսկ.): Որոյ ապականեալ զկոյս տարագիր եղեւ յեկեղեցւոյ յիւրմէ հօրէ (Եզնիկ, 297): Ի պահեստի լինի ի նմանէ (Խոր., 299): Վաճառիկ յեղբարցս լինիմ (Պիտ.)[7]:

Մի շարք կառույցներում նշված բայերի պահանջած սեռի խնդիրը անկարևոր, անհայտ լինելու կամ էլ որևէ այլ պատճառով չի հիշատակվում, ինչպես՝ Ազդ եղեւ Վասակայ քաջութիւն գնդին Վարդանայ (Եղիշէ, 80): Գողն ի բուռն անկեալ՝ չլինիցի մահապարտ (Եզնիկ, 268): Առ իւր արարեալսն եկեալ՝ անընկալ եղեւ (Ագաթ., 178): Հալածական եղաք՝ եւ ոչ գտաք հանգիստ (Ողբ., Ե, 5) և այլն:

Առնել և լինիմ բայերից բացի՝ որոշ դեպքերում միևնույն հարադրի հետ ներգործական և կրավորական սեռերի հարադրավոր բայեր

---

4 Ա. Ա. Մուրվալյանն իրավացիորեն նշում է. «.... հարադրյալ բայերի բայական հատկանիշներից մեկն էլ այն է, որ գրանք նկարագրորեն (ընդծումը մերն է-Գ.Հ.) արտահայտում են անցողականություն.... և անանցողականություն...., փոխարինելով ներգործական, կրավորական կամ չեզոք համարժեք բայերին, ինչպես՝ նեղը գցել=նեղել և նեղն ընկնել=նեղվել, շուռ տալ=շրջել և շուռ գալ=շրջվել .... և այլն» (տե՛ս Ա. Ա. Մ ո ւ ր վ ա լ յ ա ն. Հայոց լեզվի գարձվածաբանություն և բառակազմություն. Երևան, 1959, էջ 126):

5 Ա. Ս. Մարգարյանը նշում է, որ արգի հայերենում ներգործական սեռի հարադրավոր բայերի բաղադրիչ կարող են դառնալ միայն ներգործական սեռի համագրական բայերը (տե՛ս Ա. Ս. Մ ա ր գ ա ր յ ա ն. Հայերենի հարագիր բայերը. Երևան, 1966, էջ 176, 183):

6 Գրաբարում բացառված չէ ներգործական սեռի բայերի հարադրությամբ կրավորական սեռի հարագրավոր բայերի կազմությունը, ինչպես՝ եթէ որդի ուրուք իցէ, գան ոչ ըմպիցէ (Ե զ ն ի կ, 82), որտեղ ընդծված բայն ունի գարձվածքային արժեք:

7 Հմմտ. Որդեկոտոր արար զկանայս (Ա Թագ., ԺԵ, 33):

8 Հմմտ. Դարձեալ ի քաղաքէ ի քաղաք փախստեայ լինէր՝ ատելի, հալածական յամենեցունց (Բ Մակ., Ե, 8):

են ձևավորվում նաև դարձուցանել ու դառնալ, արկանել ու անկանիմ բայերի մասնակցությամբ, ինչպես՝ յաւեր դարձուցանել-յաւեր դառնալ, ի խաբս արկանել-ի խաբս անկանիմ և այլն: Հմմտ. Եւ զքաղաքս քո յաւեր դաձուցից (Եզեկ., ԻԵ, 4) և՝ Զի եթէ տունք գեղեցիկք լցեն և մեծամեծք լցեն, սակայն յաւեր դարձցին (Բուզ., 95)[9]:

Հարկ է նշել, որ այս խմբի կրավորական սեռի հարադրավոր բայերի մեծ մասի ներգործական տարբերակները վկայված են գրաբարի լեզվական աղբյուրներում, ինչպես՝ տզզ առնել, արօրադիր առնել, բնաջինջ առնել, բրածեծ առնել, դատապարտ առնել, դսրով առնել, ծաղր առնել, կոխան առնել և այլն, սակայն, այսուհանդերձ, կան կրավորական սեռի հարադրավոր որոշ բայեր, որոնց քերականական հականիշները չեն եղել կամ պարզապես չեն ավանդվել, ինչպես՝ բարեպատիւ լինիմ, գան ըմպել և այլն:

Կրավորական սեռի քերականական իմաստակիր այս բայերը մօուսներից տարբերվում են այն բանով, որ գրաբարի բայական համակարգի համար բացառիկ իրողություններ են. գրանք (ի տարբերություն կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտող մյուս հարադրավոր ու պարզ բայերի, որոնք ընդամենը ներգործական բայերի կրավորաձև խոնարհման արդյունք են) ինքնուրույն, առանձին կրավորական բայեր են և ոչ թե այս կամ այն ներգործական սեռի բայի կրավորաձև խոնարհման հետևանքով են առաջացել: Ու թեև այս բարդություններն ունեն ներգործական սեռի քերականական հականիշներ[10], սակայն վերջիններս այլ բայերի օգնությամբ են ձևավորված: Օրինակ՝ Անարգ եղիցին (հուն. անարդեսցին—Գ.Խ.) նոքա որպէս ջուր (Աղմ., ԾԷ, 8): Բարեպատիւ ի Պարոյրայ եղեն (ՆՀԲ): Յարեգականէ բոցակէզ եղեալ (ՆՀԲ):Բրածեծ եղեալ ջախջախեալ քահանայապետն Աստուծոյ սուրբ երանելի մանուկն Յուսիկ (Բուզ., 28) և այլն:

Երկրորդ դեպքում կրավորական սեռի տվյալ իմաստակիր միավորը ինքնուրույն բառ չէ: Այս դեպքում կրավորական սեռի քերականական իմաստն արտահայտվում է ներգործական սեռի հարադրավոր բայերի բայական բաղադրիչների կրավորաձև խոնարհման ճանապարհով: Այլ կերպ ասած՝ գրաբարում բազմաթիվ ներգործական սեռի հարադրավոր բայեր խոսքի մեջ հարկ եղած դեպքում կարող են խոնարհվել կա՛մ ներգործաձև, կա՛մ կրավորաձև՝ տվյալ հարադրավոր բարդությանը հաղորդելով, համապատասխանաբար, կա՛մ ներգործական, կա՛մ էլ կրավորական սեռի քերականական իմաստ: Հմմտ. օրինակ՝ Զբազումս ի սրբոցն ես բանտարգել առնէի (հուն. ի բանտս փակէի—Գ.Խ.) (Գործ., ԻԶ, 10) և՝ Իբրև բանտարգել արարեալ սլահեցան ի յարութիւն փրկչին (ՆՀԲ): Վասն ասորիկ մատնեցի զնա ի մահ (Բուզ., 103) և՝ մատնեցան ի մահ (Ադաթ., 295) և այլն:

Ներգործական սեռի բայերի կրավորաձև խոնարհման ճանապարհով կրավորական սեռի քերականական իմաստ են արտահայտում այնպիսի հարադրավոր բայեր, ինչպիսիք են՝ յաւեր մատնիմ, ի բաց վարիմ, ի բաց քանդիմ, ի բերան սրոյ արկանիմ, դերի վարիմ, կուր արկանիմ, հիմն արկանիմ, ի մահ մատնիմ, ի պարտութիւն մատնիմ, ի կոր կործանիմ և այլն: Օրինակ՝ Եկեղեցիք մատնին յաւեր (Փարպ., 51): Պատերազմեալ՝ ի գերութիւն ըմբռնեցաւ (Խոր., 103): Ի գերութիւն վարեցաւ Աեղեկիայ

---

9 Կրավորական սեռի հարադրավոր բարդությունների բայական բաղադրիչի գործառույթով հանդես են դալիս նաև չեզոք սեռի այլ բայեր (անկանիմ, դառնալ, ելանել), որոնք V դարի դրավոր աղբյուրներում բացառիկ կիրառություններ ունեն: Օրինակ՝ եթէ տունք յաւեր դարձցին (Բ ու զ., 95) և այլն:

10 Անուշյտ, Ա. Ա. Մուրվալյանը տեղին է նկատում, թե միշտ չէ, որ նշված բայերով ձևավորված հարադրավոր բարդությունները «.... զուգահեռ (ներգործական և կրավորական) ձևեր ունեն» (Ա. Ա. Մ ու ր վ ա լ յ ա ն. Հայոց լեզվի բառային կազմը. Երևան, 1955, էջ 201-202):

(Խոր., 360): Հիմն արկաւ տեղւոյդ (Թուղթ, 196): Մատնեցան ի մահ (Ագաթ., 295) և այլն[11]:

Նկատելի է, որ բերված կառույցներից շատերի կազմում ևս բացակայում է սեռի (տվյալ դեպքում՝ ներգործող անուղղակի) խնդիրը, որը ենթադրվում է այդ կառույցների բովանդակության պլանից:

Այս շարքում հաճախակի կիրառությամբ առանձնանում են կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտող հարադրավոր այն բայաձևերը, որոնք առնել և առնուլ բայական բաղադրիչներով ձևավորված ներգործականների կրավորաձև խոնարհված տարբերակներն են, ինչպես՝ Պահել յանձն արարաւ քեզ և ոչ դատել զնոսա (Եղիշէ, 145): Ասեն՝ մեք ընդ խաղ արարաք (Առակ., ԻՁ, 19): Հուրկիանոս ի պարթեւացն գերի առաւ (Եւս., Բ, 254) և այլն:

Երրորդ դեպքում կրավորական սեռի քերականական իմաստն արտահայտվում է նաև այն հարադրավոր բարդությունների միջոցով, որոնց բայական բաղադրիչները հասարակ բայեր են կամ բայաձևեր: Դրանք գրաբարում մեծ թիվ չեն կազմում, քանի որ քիչ են նաև հասարակ բայերը: Գրաբարում նշված գործառույթ կարող են կատարել անորոշ ու անցյալ դերբայները, ինչպես նաև որոշ ժամանակային ձևեր կամ դրանց դիմաթվային որոշ արտահայտություններ, ինչպես աւար հարկանիմ, դերի տանիմ, ընդ միտ տանիմ և այլն: Օրինակ՝ Հարցին աւար վաճառք (Բուզ., 87): Եթէ մոգ իցէ, ի հասարակաց մտաց փաշաման կրեալ ըմբերանեսցի (Եզնիկ, 64): Մահ ընկալեալ տանջանօք հանդերձ փոխանակ ընդ դբուատին եւ պատիւ գտանելոյ ի նոցանէ (Ագաթ., 322-323): Զի մի ի պաշտօն ի դեռահաւատ բարբարոսացս առցի ազգաց (Խոր., 224): Ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել (Մատթ., Ի, 28): Յաղջկանէ միոջէ յունէ ի կալանս ըմբռնեալ (Խոր., 197): Ի պարտութիւն մատնէր ի Գարգանայ (Եւս., Բ, 122): ԶԱստուած ի խաչ ելեալ ի մարդկանէ քարոզեն (Եղիշէ, 27) և այլն:

Կրավորական սեռի հարագրավոր բայերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք արժույթի տեսանկյունից հավասարազոր են ներգործական սեռի հարադրավոր բայերին. այն տարբերությամբ միայն, որ ներգործական սեռի հարադրավոր բայերի արժութային միավորներն այստեղ ձեռք են բերում շարահյուսական նոր գործառույթներ:

Կրավորական սեռի բոլոր հարադրավոր բայերը ենթակառու են: Օրինակ՝ Պոմպէի թէատրոնն հրձիգ եղև (Եւս., Բ, 262): Ի ձեր սակս Սիովն իբրև զագարակ արօրադիր լիցի (Միք., Գ, 12): Յորոց ինքն նպաստ եղև (Ոսկ.): Գողն ի բուռն անկեալ չլինիցի՞ մահապարտ (Եզնիկ, 268) և այլն:

Եթե նկատի առնենք, որ կրավորական սեռի հարագրավոր բայերի պահանջած կամ ենթադրվող ենթական ներգործական սեռի հարադրավոր բայերով ձևավորված կառույցների մեջ պարտադիր կատարում է ուղիղ խնդրի շարահյուսական գործառույթ [Հմմտ. Որդեկոտոր արար զկանայս և՝ Կանայք որդեկոտոր եղեն: Այլ պարսիկք զիս ի խաբս այլ ոչ արկցեն և՝ Այլ ես ի պարսկաց ի խաբս այլ ոչ անկայց (Բուզ., 209) կառույցները], ապա դժվար չէ եզրակացնել, որ կրավորական սեռի հարադրավոր բայերը ենթակառությամբ արժութազուրկ կարող են լինել լոկ այն դեպքում, եթե դրանց քերականական հականիշները՝ ներգործական սեռի հարադրավոր բայերը, արժութազուրկ լինեն սեռի խնդրառության տեսանկյունից. մի հանգամանք, որը տեսականորեն բացառվում է:

Ինչ վերաբերում է «Լիցի եւ ատելի յազգաց» (Առակ., ԻԴ, 24): «Ի պահեստի լինի ի նմանէ» (Խոր., 299) տիպի կառույցներին, ապա սրանցում ենթակաների բացակայությունը զուտ ոճական հնարանք է և հիմք չի տալիս նշելու, թե դրանց կրավորական սեռի հարագրավոր բայ-ստո-

---

11 *Հմմտ. Ապստամբութիւնն ի կոր կործանեսցի (Նար., 69), որտեղ առկա է ընդգծված բայի փոխաբերական իմաստը:*

բոգյալները ենթակառուցվածքը արժութագուրկ են, քանի որ հարկ եղած դեպքում այդ բայերի ենթակաները արտահայտության պլանում կարելի է վերականգնել:

Տեսականորեն ստորոգառու ներգործական սեռի հարադրավոր բայերի կրավորական ձևերը ևս օժտված են ստորոգառական արժույթով: Հմմտ. Հրաման ետ նմա զայսչափ գանձս հանել բերել (Բ Մակ., Գ, 7) և՝ Եւ էր հրաման տուեալ նմա սատակել զաստուածս երկրին (Յուդ., Գ, 12): Թե՛ ներգործական և թե՛ կրավորական սեռերի հարադրավոր բայերը պահանջում են հիմնականում անորոշ դերբայով արտահայտված ստորոգելի: Ներգործական և կրավորական սեռերի ստորոգառու հարադրավոր բայերի տարբերությունն այն է, որ առաջինները ստորոգելի կարող են առնել և՛ անգեմ, և՛ բոլոր գիմավոր ձևերով կիրառվելով, ինչպես՝ հրաման տալ պատասխանի առնել (Ա Մակ., ԺԲ, 13), ետու հրաման լինել նմա առաջնորդ (Գ Թագ., Ա, 35), հրաման տացես կորուսանել զնա (Եսթ., Գ, 9), հրաման ետ հրովարտակ առնել (Ա Մակ., ԺԱ, 57), հրաման տուաք արձակել զգոսա (Գ Մակ., Է, 5) և այլն: Ինչ վերաբերում է կրավորական սեռի հարադրավոր բայերին, ապա սրանք ստորոգառու են դառնում միայն եզակի թվի երրորդ դիմային ձևով խոնարհված, ինչպես՝ Քանզի հրաման տուեալ էր .... անուանել զնա .... (Եսթ., Թ, 4): Այլ կերպ ասած՝ կրավորական սեռի հարադրավոր բայերը ստորոգառու կարող են դառնալ միակազմ նախադասությունների մեջ:

Գրաբարում ստորոգառության արժույթով կարող են առանձնանալ թոյլ տալ, յանձն առնել, հրաման տալ, անուն դնել և այլ հարադրավոր բայերի կրավորական ձևերը: Հարկ է նշել, սակայն, որ նշված բայերը առավել հաճախ ներգործական սեռի քերականական իմաստի դեպքում են աչքի ընկնում ստորոգառական արժույթով: Այս հանգամանքն առաջին հերթին պայմանավորված է տվյալ շրջանի լեզվամտածողությամբ[12]: Համեմատության համար նշենք, որ Աստվածաշնչում հրաման տալ հարադրավոր բայը անորոշ դերբայի հետ ունի հարյուրից ավելի կիրառության դեպքեր, որոնցից միայն վերը բերված երկուսն են արտահայտում կրավորական սեռի քերականական իմաստ:

Խնդրառության տեսանկյունից կրավորական սեռի հարադրավոր բայերը լինում են միարժույթ կամ երկարժույթ (ճիշտ այնպես, ինչպես սրանց ըստ սեռի քերականական կարգի հականիշ ներգործական սեռի հարադրավոր բայերը): Եվ ինչպես խնդրառությամբ միարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերն են թվով և գործածությամբ գերազանցում խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերին, այնպես էլ խնդրառությամբ միարժույթ կրավորականները՝ երկարժույթ կրավորականներին:

Կրավորական սեռի հարադրավոր բայերի՝ խնդրառությամբ միարժույթ լինելն ուղիղ համեմատական է դրանց ներգործական սեռի՝ տարբերակների խնդրառությամբ միարժույթ լինելուն: Տարբերությունն այն է, որ եթե ներգործական սեռի հարադրավոր բայերը պարտադիր պահանջում կամ ենթադրում են գործողությունն անմիջականորեն կրող սեռի խնդիր, ապա կրավորական սեռի հարադրավոր բայերը պարտադիր պահանջում կամ ենթադրում են գործողությունն անուղղակիորեն կատարող սեռի խնդիր:

Խնդրառությամբ միարժույթ կրավորական սեռի հարադրավոր բայերը, որպես կանոն, պահանջում կամ ենթադրում են մի սեռի խնդիր[13], որը

---

12 Նույն բանը նկատվում է նաև արդի հայերենում:

13 Գրաբարյան աղբյուրներում վկայված են մի շարք կառույցներ, որոնց բայ-ստորոգյալը թեև կարող է այլ կիրառության մեջ կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտել, սակայն հետևյալ կիրառությունների մեջ դրանք հանդես են բերել ոչ թե կրավորական, այլ չեզոք սեռի բայերի քերականական իմաստ, քանի որ չունեն և

չարահյուսական բնագավառում կատարում է ներգործող անուղղակի խնդրի գործառույթ, ինչպես՝ Զի մի ի պաշտօն ի դեռահաւատ բարբարոսացս առցի ազգաց (Խոր., 224): Ի մտերմացն Շապհոյ դեղակուր եղեալ՝ մեռանի (Խոր., 235): Շատ է այնպիսւոյն պատուհասն ըստգիւտ լինել ի բազմաց անտի (Ոսկ.) և այլն:

Հազվադեպ ներգործող անուղղակի խնդիրը կարող է արտահայտվել նաև կապական կապակցությամբ, որտեղ սեռականով արտահայտված կապվող բառաձևի հետ հանգես են գալիս յերեսաց կապական բառն ու առաջի կապը: Օրինակ՝ Ի պարտութիւն մատնեցաւ գունդն Հայոց (Փարպ., 125) յերեսաց նոցա (Բուզ., 125): Ի պարտութիւն մատենացաւ առաջի Մանուէլեան գնդին (Բուզ., 204): Ընդ որում, հիշյալ խնդիրը շատ հաճախ զեղչվում է ենթատեքստից հասկանալի, հեղինակի համար անկարևոր կամ անհայտ լինելու պատճառով. հակառակ դեպքում սովորաբար գործածվում են սրանց ներգործական տարբերակները, որտեղ կատարողը մղվում է առաջին պլան՝: Օրինակ՝ Տունք բազումք, սակայն, յաւեր դարձցին (Ես., Ե 9): Յետ սուսերահար լինելոյ Խոսրովու (Խոր., 214): Ազդ եղեւ Վասակայ քաջութիւն գնդին Վարդանայ (Եղիշէ, 80) և այլն: Նմանատիպ կառույցները ներգործականի փոխակերպելիս ստացվում են անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ, ինչպես՝ Ազդ արարին Վասակայ քաջութիւն գնդին Վարդանայ:

Ինչ վերաբերում է խնդրառությամբ երկարժույթ կրավորական սեռի հարադրավոր բայերին, ապա սրանք էլ խնդրառությամբ երկարժույթ ներգործական սեռի հարադրավոր բայերի քերականական հականիշներն են: Օրինակ՝ Իսկ անմիտք ցանկացօղք թշնամանաց դատապարտք եղեն յանդիմանութեանց (Առակ., Ա, 22) նախադասության դատապարտ լինիմը (դատապարտ առնել-ի բնույթով պայմանավորված) պահանջում է մի սեռի խնդիր՝ արտահայտված բացառական հոլովով (բերված նախադասության մեջ այն բացակայում է) և մի բնության խնդիր՝ արտահայտված տրական հոլովով (յանդիմանութեանց):

Կրավորական սեռի հարադրավոր բայերից պարտադիր պարագաառությամբ առանձնանում են այնպիսիք, որոնք սերվել են պարագաառությամբ բնութագրվող ներգործական սեռի հարադրավոր բայերից: Օրինակ՝ Որոյ ապականեալ զկոյս տարագիր եղեւ յեկեղեցւոյ յիւրմէ հօրէ (Եզնիկ, 297) և այլն: Այլ կերպ ասած՝ տեսականորեն պարագաառական արժույթով կարող են բնութագրվել ի բաց մերժիմ (ի միաբանութենէ), արտաքս ոնկենում (ի սենեկէն), ի վայր կործանիմ (ի կամրջաց), ի բաց առնում (ի դրաց) և ներգործական սեռի բազմաթիվ այլ հարադրավոր բայեր:

Ինչ վերաբերում է Մի՛ ընդ խաղ արկցի առ նոսա հոգւոյն Աստուծոյ ազդումն (Գործ., Բ, 13): Ի ձեր սակս Սիովն իբրև զագարակ արօրադիր լիցի (Միք., Գ, 12): Հեզձամահ եղեւ յիւրոց սենեկապետաց ի հրամանէ արքայի ի գաղտնիս (Խոր., 283): Մեհեան կապիտովլին հրձիգ եղեւ ի Հռովմ (Եւս., Բ, 272) և այլ նախադասությունների մեջ հանդիպող տեղի,

---

չեն ենթադրում իրենց ենթակայի վրա ներգործող առարկա: Օրինակ՝ Ամենայն լեառն ւկօսաբեկ լիցի (Ես., Է, 25): Ցամենայն կողմանց ալեկոծ լինէին միտք նոցա (Ե ղ ի շ է, 203): Զիա՞րդ մատնեցաւ ի ձեռս Վասակայ (Բ ու զ., 53): Այլակերպս եղեւ առաջի նոցա (Մարկ., Թ. 1): Անձամբ յանձն ձեռնամուխ լինել, անձին առնել հարադրավոր բայերը դարձվածքային արժեք ունեն և նույնպես նշում են ենթակայի կողմից իր նկատմամբ կատարված գործողության գաղափար, ինչպես՝ Պոնտոս Պիղատոս ի պէս-պէս վիշտս մատնեալ՝ անձամբ յանձն ձեռնամուխ լինէր (Ե ւ ս., Բ, 266-268): Ներոն, առ չժուժալ չարաչար գուժին, ի բուրաստանի ուրեմն անձին արար (Ե ւ ս., Բ, 272-274) և այլն:

14 Նշված երևույթի մասին դիտարկումները տե՛ս Ա. Գ. Ա բ ր ա հ ա մ յ ա ն. Բայը ժամանակակից հայերենում. գիրք 1, Երևան, 1953, էջ 627: Ա. Ս. Մ ա ր գ ա ր յ ա ն. նշվ. աշխ. էջ 194:

ժամանակի, հիմունքի, ձևի և այլ պարագաներին, ապա սրանց առկայությունն անմիջականորեն չի բխում ընդգծված բայերի բովանդակության պլանից. գրանք խոսքի մեջ կիրառվում են ըստ տվյալ խոսքահատվածի իմաստային ամբողջությունն ապահովելու անհրաժեշտության:

Կրավորական սեռի հարագրավոր բայերով արտահայտված նախադասությունները V դարի հայ պատմիչների նախասիրած հաղորդակցական միավորները չեն: Ասվածի մասին է վկայում նշված տիպի կառույցների գրեթե բացառիկ կիրառությունը լեզվական աղբյուրներում[15]: Այսուհանդերձ, դրանց առկայությունը պատումի լեզուն դարձնում է անմիջական ներգործական կառույցների առատության մեջ մտցնելով ոճական թարմություն:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1883:
Բուզ. — Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
Եզնիկ. - Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
Եղիշէ - Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:
Եւս. - Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանականք երկմասնեայ, մասն Բ, Քրոնիկոն կանոն, Վենետիկ, 1818:
Խոր. — Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
Կորիւն — Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941:
Փարպ. — Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904:

15 Նույն բանը նկատվում է նաև արդի հայերենում (տե՛ս պրոֆ. Ա.Գ. Աբրահամյան. նշվ. աշխ. գիրք 1, էջ 616-630: Ա. Ս. Մարգարյան. նշվ. աշխ., էջ 191-192):